Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Էջմիածին համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 18-ի
Թիվ 12 նիստի թիվ 124-Ն որոշմամբ

### ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | Տեսակը | Դրույքաչափը /սահմանված օրենքով/ | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամով/ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | ՏՈՒՐՔԵՐ | |
| 1. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար | ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝ | |
| | | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 15000 /տասնհինգ հազար/ |
| | | բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար | |
| | | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 1,5 գործակցի կիրառմամբ | 45000 /քառասունհինգ հազար/ |
| | | 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2 գործակցի կիրառմամբ | 100 000 /հարյուր հազար/ |
| | | 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 2,5 գործակցի կիրառմամբ | 125 000 /հարյուր քսանհինգ հազար/ |
| | | 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 3 գործակցի կիրառմամբ | 300 000 /երեք հարյուր հազար/ |
| | | գ) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| | | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ | 3000 /երեք հազար/ |
| | | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ: | 5000 /հինգ հազար/ |
| 2. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված | ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ. 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 3 գործակցի կիրառմամբ | 9000 /ինը հազար/ |
| | | բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, | կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա | օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը: |
| 3. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ | հինգ հազար դրամ. | 5000 /հինգ հազար/ դրամ |
| 4. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ | հեղուկ վառելիքի՝ ընթացիկ տարվա համար 200 000 դրամ | 200 000 /երկու հարյուր հազար/ |
| | | սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի համար՝ օրացուցային տարվա համար դրույքաչափը սահմանել 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել | 300 000 /երեք հարյուր հազար/ |
| 5. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, | օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ. | 60 000 /վաթսուն հազար/ |
| 6. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ. | 50 000 /հիսուն հինգ հազար/ |
| | | ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| | | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ. | 10 000 /տաս հազար/ |
| | | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ | 13 000 /տասներեք հազար/ |
| | | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ. | 20 000 /քսան հազար/ |
| | | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ. | 30000 /երեսուն հազար/ 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 20 000 /քսան հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափ |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ | | |
| | | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ. | 45000 /քառասունհինգ հազար/ |
| | | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ. | 60 000 /վաթսուն հազար/ |
| | | բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ. | 10 000 /տաս հազար/ |
| | | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ. | 13 000 /տասներեք հազար/ |
| | | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.<br>12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 17 000 /տասնյոթ հազար /-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 25 500 /քսանհինգ հազար հինգ հարյուր/ |
| | | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.<br>12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 20 000 /քսան հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 30000 /երեսուն հազար/ |
| | | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ. | 45000 /քառասունհինգ հազար/ |
| | | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ. | 60 000 /վաթսուն հազար/ |
| 8. | իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար | ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրի դեպքում յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար. | 350 /երեք հարյուր հիսուն/ |
| | | պաղպաղակի բացօթյա առևտուրի դեպքում յուրաքանչյուր օրվա համար կիրառել 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 0,5 գործակիցը | 175 /հարյուր յոթանասունհինգ/ |
| 9. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար. | ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ. | 50 000 /հիսուն հազար/ |
| | | բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ. | 100 000 /հարյուր հազար/ |
| | | գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ. | 200 000 /երկու հարյուր հազար/ |
| | | դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ. | 1 000 000 /մեկ միլիոն/ |
| | | ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ. | 500 000 /հինգ հարյուր հազար/ |
| | | զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ. | 100 000 /հարյուր հազար/ |
| | | ա. հիմնական շինությունների ներսում՝ | |
| | | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային | 7500 |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Էջմիածին քաղաքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ. դրույքաչափը հաշվարկել 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 գործակցի կիրառմամբ | /յոթ հազար հինգ հարյուր/ |
| | | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ. | 10 000 /տաս հազար/ |
| | | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ | 15000 /տասնհինգ հազար/ |
| | | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ. | 20 000 /քսան հազար/ |
| | | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ. | 30 000 /երեսուն հազար/ |
| | | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ. | 50 000 /հիսուն հազար/ |
| | | բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝ | |
| | | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 1 000 / հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 1500 /հազար հինգ հարյուր/ |
| | | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 2 000 / երկու հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 3000 /երեք հազար/ |
| | | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 4 000 /չորս հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 6000 /վեց հազար/ |
| | | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 8 000 / ութ հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 12000 /տասներկու հազար/ |
| | | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 15 000 /տասնհինգ հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 22 500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ |
| | | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ. 12-րդ հոդվածի, 3-րդ մասի համաձայն 25 000 / քսանհինգ հազար/-ի նկատմամբ կիրառել 1,5 դրույքաչափը | 37 500 /երեսունյոթ հազար հինգ հարյուր/ |
| 11. | քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ. | տուրքի նկատմամբ սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառումով | 0 /զրո/ |
| | ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Էջմիածին համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության | ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ. | 2000 /երկու հազար/ |
| | | բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ. | 3500 /երեք հազար հինգ հարյուր/ |
| | | գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ | 0 /զրո/ |
| | | դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ. | 1500 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | / հազար հինգ հարյուր/ |
| 12. | ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով. | 375<br>/երեք հարյուր յոթանասունհինգ/ |
| | | զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով: | 150<br>/հարյուր հիսուն/ |
| 13. | Էջմիածին համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ. | 100 000<br>/հարյուր հազար/ |
| 14. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ. | դրույքաչափը հաշվարկել 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 0,75 գործակցի կիրառմամբ | 7 500<br>/յոթ հազար հինգ հարյուր/ |
| 15. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ | 500 000<br>/հինգ հարյուր հազար/ |
| 16. | Էջմիածին համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ. | 2.500.000<br>/երկու միլիոն հինգ հարյուր հազար/ |
| | | բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ. | 5.000.000<br>/հինգ միլիոն/ |
| | | գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ. | 7.000.000<br>/յոթ միլիոն / |
| | | դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ: | 10.000.000<br>/տաս միլիոն/ |
| 17. | համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար հիսուն հազարից մինչև երեք հարյուր հազար դրամ. | 50 000 /հիսուն հազար/ |
| 18. | համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ | կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ, | 20 000<br>/քսան հազար/ |
| | | հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, | 300 000<br>/երեք հարյուր հազար/ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Էջմիածին համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 18- ի
թիվ 12 նիստի թիվ 124-Ն որոշման

*ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ*
*ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

| | Տեսակը | Դրույքաչափը /սահմանված օրենքով/ | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամով/ | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | |
| | *ՎՃԱՐՆԵՐ* | | | |
| 1. | Էջմիածին համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | ա/ հասարակական, արտադրական շինությունների համար | 50.000 /հիսուն հազար/ | |
| | | բ/ բնակելի տան և դրա սպասարկման շինությունների համար | 5000 /հինգ հազար/ | |
| 2. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | ա/ հասարակական, արտադրական շինությունների համար | 50 000 /հիսուն հազար/ | |
| | | բ/ բնակելի տան և դրա սպասարկման շինությունների համար | 5000 /հինգ հազար/ | |
| 3. | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | ա/ հասարակական, արտադրական շինությունների համար | 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ | 50 000 /հիսուն հազար/ |
| | | | 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար՝ | 70 000 /յոթանասուն հազար/ |
| | | բ/ բնակելի տան և դրա սպասարկման շինությունների համար | 4-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ | 5000 /հինգ հազար/ |
| | | | 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար՝ | 15 000 /տասնհինգ հազար/ |
| 4. | համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | | մինչև 100մ$^2$ | 5000 /հինգ հազար/ |
| | | | 101- 1000 մ$^2$ | 10 000 /տաս հազար/ |
| | | | 1001 մ$^2$-10000 մ$^2$ | 20.000 /քսանհազար/ |
| | | | 10001 մ$^2$-ից ավելի | 40.000 /քառասուն հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| 5. | համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | Մրցույթների մասնակցության համար | 20.000 /քսան հազար/ |
| | | Աճուրդների մասնակցության համար | աճուրդի դրված գույքի մեկնարկային արժեքի 1% |
| 6. | համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | օրական | 1000 /մեկ հազար/ |
| 7. | համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում. | 1. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ | 200 /երկու հարյուր/ |
| | | 2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով. | |
| | | 1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ. | 100 /հարյուր/ |
| | | 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ. | 50 /հիսուն/ |
| | | 3) ա.ֆինանսական և կապի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից միչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | 20 /քսան/ |
| | | բ.Վարչական/վարչական և առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | 15 /տասնհինգ/ |
| | | 4)ա. գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ | 3 /երեք/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Հայաստանի Հանրապետության դրամ, | |
| | | բ. զբոսանցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ. | 8<br>/ութ/ |
| | | 5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ. | 15<br>/տասնհինգ/ |
| | | 6)շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, | համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով. |
| | | 7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, | աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով |
| | | 2.1.Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների համար | |
| | | ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ: | 50<br>/հիսուն/ |
| | | 2.2.Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, | |
| | | որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, | աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին: |
| | | 3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| | | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ. | 10 000<br>/տաս հազար / |
| | համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին | | |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար | 10 000 /տաս հազար / |
| 9. | ոռոգման ջրի մատակարարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, | 60կվ/ժ ջրապոմպի օգտագործման դեպքում ժամը | 900 /ինը հարյուր/ |
| | | 55կվ/ժ ջրապոմպի օգտագործման դեպքում ժամը | 800 /ութ հարյուր/ |
| | | 40կվ/ժ ջրապոմպի օգտագործման դեպքում ժամը | 600 /վեց հարյուր/ |
| 10. | համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. | բնակարանի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ընդհանուր մակերեսի համար, ամսական | 17 /տասնյոթ/ |
| 11. | համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. | ամսական | 7000 /յոթ հազար/ |
| | | այլ համայնքներից Էջմիածին քաղաքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ այցելող երեխաների խնամքի համար | 20000 /քսան հազար/ |
| 12. | համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. | ա/Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցում սովորողների համար ամսական | 3000 /երեք հազար/ |
| | | Այլ համայնքների բնակիչ հանդիսացող սովորողների համար բոլոր մասնագիտությունների համար | 11000 /տասնմեկ հազար/ |
| | | բ/<<Մ. Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> և <<Ս. Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ներում սովորողների համար, ամսական՝ | |
| | | լարային և ազգային նվագարանների բաժիններ | 3000 /երեք հազար/ |
| | | երկրորդ մասնագիտություն ստանալու նպատակով | 2500 /երկու հազար հինգ հարյուր/ |
| | | Թավջութակի բաժնի համար սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառումով | 0 /զրո/ |
| | | դաշնամուրային և կիթառի բաժին | 6500 /վեց հազար հինգ հարյուր/ |
| | | մյուս բոլոր բաժիններ | 5500 /հինգ հազար հինգ հարյուր/ |
| | | գ/Մշակույթի տներում գործող ուսուցողական խմբերի | |
| | | բոլոր խմբերում սովորողների համար | 4000 /չորս հազար/ |
| 13. | համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով | | 0 /զրո/ |
| 14. | համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների | | 0 /զրո/ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից. | | | |
| 15. | համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև հազար դրամ փոխհատուցման վճար. | | 1000 /հազար/ | |
| | | Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված կամ վիրավորված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց ընտանիքների համար | 0 /զրո/ | |
| 16. | համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով | | 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ | |
| 17. | Էջմիածին համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքի հասցեի տրամադրման համար | ա/ հասարակական, արտադրական շինությունների համար | 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ | 10.000 /տաս հազար / |
| | | | 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար | 15.000 /տասնհինգ հազար/ |
| | | բ/ բնակելի տան և դրա սպասարկման շինությունների համար | 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ | 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ |
| | | | 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար | 10.000 /տաս հազար / |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ